ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Բանկը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ նշենք, որ 2025 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների աճ: Մասնավորապես,

- Բանկի ընդհանուր Ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 28 մլրդ դրամով կամ 5%-ով և կազմել 604 մլրդ դրամ:



✓ Համախառն վարկային պորտֆելը կազմել է մոտ 349 մլրդ դրամ նախորդ տարվա համեմատ աճելով 31 մլրդ դրամով (9.6%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 58%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը աճել է մոտ 32 մլրդ դրամով (16.2%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը նվազել է մոտ 1.3 մլրդ դրամով (1.1%-ով)

2025թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2025Թ.ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



- Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 11.2 մլրդ դրամով կամ 2.3%-ով և կազմել 498 մլրդ դրամ: Սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,ՄԼՐԴ ԴՐԱՄ



2025թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 37.5 մլրդ դրամով կամ 10.57%-ով և կազմել ընդհանուր պարտավորությունների մոտ 78.8%-ը:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՄԼՐԴ ԴՐԱՄ



- Սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 16.9 մլրդ դրամով կամ 19%-ով և կազմել 106.2 մլրդ դրամ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- 2025թ.-ին Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական

տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Տարվա զուտ շահույթը կազմել է 16.7 մլրդ դրամ: Այն նախորդ տարվա համեմատ աճել է 5.6%-ով:



- Գործառնական շահույթը կազմել է 20.5 մլրդ դրամ նախորդ տարվա համեմատ աճելով 1 մլրդ դրամով կամ 5%-ով:



- Տոկոսային եկամուտները կազմել են 52.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 15.7%-ով:
- Տոկոսային ծախսերը կազմել են 23.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18.3%-ով:

2025թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Զուտ տոկոսային եկամուտները կազմել են մոտ 29.5 մլրդ դրամ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 13.6%-ով:

- Ոչ տոկոսային եկամուտները կազմել են 10.8 մլրդ դրամ նախորդ տարվա համեմատ նվազելով 2%-ով:

- Ոչ տոկոսային ծախսերը կազմել են մոտ 20 մլրդ դրամ նախորդ տարվա համեմատ աճելով 13.4%-ով:



- Պահուստներից զուտ վերադարձը կազմել է 175 մլն դրամ, նախորդ տարի՝ 312 մլրդ դրամ:
- Ծախս/Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 49%՝ նախորդ տարվա 47.1% ցուցանիշի դիմաց:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է "Ռիսկի կառավարում" թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Խորհրդի նախագահ՝ **Մարսելո Վենդե**

Խորհրդի անդամ՝ **Արսեն Գամաղելյան**